

Ս. Ա. Միքայելյան, Անտիոքի հայերեն բարբառախմբի արաբական փոխառությունները, Ե., «Աստղիկ» հրատ., 2018, 196 էջ: Հայերենի բարբառային միավորների համակողմանի, այդ թվում նաև նրանցում օտար ազդեցությունների վերաբերյալ հետազոտությունները ոչ միայն հայ լեզվաբանության, այլև ընդհանուր հայագիտության արդիական և կարևոր խնդիրներից են: Ս.Միքայելյանի «Անտիոքի հայերեն բարբառախմբի արաբական փոխառությունները» գիրքը նվիրված է արաբերենի ազդեցության դրսևորումներին հայերենի բարբառների արևմտյան խմբակցության Անտիոքի կամ ծայրհարավարևմտյան բարբառախմբում:

Հայերենագիտության արդի փուլում, երբ բարբառային առանձին միավորների հավաքումը, նկարագրությունն ու ուսումնասիրումը արևմտյան տարածքներում, ցավոք, այլևս գրեթե անհնար է, բարբառագիտական հետազոտությունները հիմնականում հիմնվում են գրավոր վկայված համապատասխան նյութերի կամ էլ մենագրական առանձին հետազոտությունների տվյալների վրա: Բայց, բարեբախտաբար, դեռևս գոյություն ունեն տարածքային որոշ միավորներ, որոնք գոյատևում են իրենց պատմական տարածքներում կամ էլ այդ տարածքներին շատ մերձավոր վայրերում: Հայերենի այդպիսի միավորներից են Անտիոքի և նրա մերձակա տարածքների՝ Սվեդիայի, Քեսաբի, Արամոյի, Բեյլանի խոսվածքները, որոնց հետազոտողները դեռևս որոշ չափով հնարավորություն ունեն իրենց ուսումնասիրություններում համապատասխան լեզվական իրողությունների դրսևորումները ստուգել և ճշգրտել կենդանի բարբառակիրների միջոցով: Ներկայացված գրքի հեղինակը ևս ունեցել և հաջողությամբ օգտագործել է այդ հնարավորությունը:

Հարկ է նշել, որ Ս.Միքայելյանի «Անտիոքի հայերեն բարբառախմբի արաբական փոխառությունները» գիրքը գիտական լուրջ հետազոտություն է, որը կարևոր ձեռքբերում է ո՛չ միայն հայերենագիտության, հայ լեզվաբանության համար: Հայտնի է, որ հայ արևելագիտությունը սկզբնավորվել է հարակից լեզուների և մշակույթների ուսումնասիրության միջոցով հայերենին առնչվող փաստերը և երևույթները հետազոտելու նպատակադրությունից: Այդ առումով այս աշխատանքը էական ներդրում կարելի է համարել նաև խնդրո առարկա հարցերի լուսաբանման, ինչպես նաև «հայ արևելագիտություն» մեթոդաբանական տիրույթում: Բացի այդ, աշխատանքի կատարման ընթացքում ուսումնասիրվող տարածաշրջանում տեղի ունեցող ողբերգական իրադարձություններն իրենց հերթին լրացուցիչ արդիականություն են հաղորդել հետազոտությանը. հայ բնակչության զանգվածային արտագաղթը լրջորեն վտանգել է Անտիոքի բարբառախմբի խոսվածքների կենդանի գոյությունը, և այդ առումով ուսումնասիրությունը ձեռք է բերում նաև լեզվաբանական եզակի նյութի պահպանման նշանակություն:

Գիրքն ունի կուռ կառուցվածք, բաղկացած է առաջաբանից, երկու գլուխներից, եզրակացություններից, համառոտագրություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Առաջաբանում շարադրված են առաջադրվող ընդհանուր հարցադրումները, անդրադարձ է

կատարված հայ-սիրիական պատմական փոխհարաբերություններին և հայ-արաբական լեզվական առնչություններին:

Գրքի առաջին գլուխը («Արաբերենի հնչյունական համակարգի արտացոլումը Անտիոքի հայերեն խոսվածքներում»), որն ունի երկու ենթաբաժիններ, ամբողջապես նվիրված է երկու լեզուների հնչյունական համակարգերի նկարագրությանը, քննվող տարածքների խոսվածքային միավորներում փոխատու լեզվի հնչյունական հատկանիշների արտացոլումներին, շեշտափոխական, դիրքային և փոխազդեցական հնչյունափոխություններին: Կատարված են համապատասխան դասակարգումներ:

Նկատելիորեն հաջողված է նաև աշխատանքի երկրորդ գլուխը («Անտիոքի հայերեն խոսվածքներում արաբերենից կատարված փոխառությունների ձևափաստային քննություն»)՝ բաղկացած երեք ենթաբաժիններից, որոնցում հանգամանալից ներկայացված են արաբերենի և ուսումնասիրվող բարբառախմբի տիպաբանական բնութագրերը, վերհանված են երկու լեզվական համակարգերի (արաբերենի և հայերեն բարբառի) քերականական, բառակազմական սկզբունքային տարբերությունները:

Առանձնահատուկ խնամքով է կազմված նաև գրքի հավելվածը. այն արաբերենից փոխառյալ բառերի (ավելի քան չորս հարյուր բառային միավոր) իմաստաթեմատիկ բառարան է, որում բարբառային փոխառյալ բառերը ներկայացվում են իրենց նշանակությամբ: Միաժամանակ, նշված է, թե բարբառախմբի որ խոսվածքում (խոսվածքներում) են դրանք գործածվում, տրված են այդ բառերի արաբերեն համարժեքներն ու փոխատու լեզվում դրանք իմաստները:

Գրքի արժանիքներից է նաև այն, որ ներկայացված է հարուստ տեսական նյութ՝ քաղված ոչ միայն հայ լեզվաբանների բարբառային աշխատանքներից, բարբառային ձեռագիր նյութերի ընձեռած փաստերից, հայ արևելագետների ու պատմաբանների, այլ նաև՝ հանրալեզվաբանության առաջատար հետազոտողների՝ Ու.Վայնրայխի, Ռ. Բելլի, Վ.Շազալի և այլոց աշխատություններից:

Ս. Միքայելյանի «Անտիոքի հայերեն բարբառախմբի արաբական փոխառությունները» գիրքը արժեքավոր է առաջադրված թեմայի արդիականությամբ, հարցադրումներով, դրանք քննարկելու և փաստարկված հիմնավորելու գիտական խորությամբ: Վստահաբար կարելի է ասել, որ հայագիտության և հայ արևելագիտության անհրաժեշտ մաս կազմող այս աշխատանքն ունի տեսական և գործնական կարևորություն:

Բանասիր. գիտ. թեկնածու Ս. Բ. ԿԱՐԱԲԵԿՅԱՆ